ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աջակցող կառույցներ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակ և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպություն

Փորձագիտական խումբ՝ Դավիթ Թումասյան – սոցիալական ոլորտի իրավաբան

Արմեն Մարտիրոսյան - համայնքային ծառայությունների գործընթացների կառավարման փորձագետ

Արփի Բարսեղյան – համայնքային ծառայողների կառավարման փորձագետ

Կարեն Սարգսյան – կառավարման և զարգացման խորհրդատու

Ռոզա Սոլոմոնյան – սոցիալական աշխատանքի փորձագետ

ԵՐԵՎԱՆ 2019

Սեղմագիր

Սոցիալական պաշտպանության համակարգը կյանքի տարբեր փուլերում ապահովում է՝ սոցիալական ռիսկերի առաջացման կանխարգելումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց աջակցումը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և աղետների հետևանքով առաջացած ռիսկերը հաղթահարելու միջոցառումների իրականացումը: Երևան քաղաքն առանձնանում է սոցիալական խնդիրների լուծման ծավալով, հրատապությամբ, շահառուների առանձնահատկություններով, սոցիալական պաշտպանության մարմինների ու կազմակերպությունների բազմազանությամբ:

ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագիրը նոր առաջնահերթություններ է նախանշել սոցիալական պաշտպանության ոլորտում, որոնք ուղղված են քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Այս առաջնահերթությունների իրականացման համար Երևան քաղաքում անհրաժեշտ է ստեղծել երեխայի և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգ և հստակ արտացոլել այն Երևանի զարգացման գերակայություններում թե՛ քաղաքականության, թե՛ իրականացման, թե՛ ֆինանսական միջոցների տրամադրման տեսանկյունից:

Երևանի քաղաքապետարանը պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում իրականացնում է սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը, առանձնացված ստորաբաժանում հանդիսացող տարածքային մարմինների՝ ՍԱՏԲ-ների միջոցով: Սակայն ՀՀ ԱՍՀՆ կողմից 2019թ. հունիսի 20-ին շրջանառված և 2019թ. սեպտեմբերի 2-ին վերաշրջանառված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ընդունման արդյունքում պատվիրակված լիազորությունները կվերանայվեն՝ այսինքն կանցնեն ամբողջությամբ ՀՀ ԱՍՀՆ ենթակայության տակ:

Հաշվի առնելով ՍԱՏԲ-ների ենթակայության փոփոխությունը, ԻՄԾ-ների բարեփոխումները, ապակենտրոնացմանն ուղղված գործընթացները, ինչպես նաև համայնքի սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացումը՝ անհրաժեշտ է վերանայել Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգը, ինչպես նաև հստակեցնել համայնքին վերապահված լիազորությունների տիրույթը՝ դարձնելով այն ավելի արդյունավետ, կարիքների վրա հիմնված և համահունչ կառավարության սոցիալական պաշտպանության նպատակներին:

Երևանի քաղաքապետարանի պատվերով ձևավորված փորձագիտական թիմի կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ու Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների աջակցությամբ, 2019թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին իրականացվեց սույն հետազոտությունը, որի նպատակն էր աջակցել Երևան քաղաքի՝ երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում համակարգի բարեփոխումներին՝ առաջարկելով գործուն մեխանիզմներ ուղղված Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում կառավարման կառուցվածքային անցնցում փոփոխություններին, տեղական մակարդակում նշված համակարգի արդյունավետության բարելավմանը, բազմակողմանի համագործակցությանը, ինչպես նաև

համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանն ու տեղական սոցիալական պլանավորմանը: Հետազոտության բազմաշերտ ծածկույթը, ծավալը և համապարփակ մոտեցումներն աննախադեպ են Երևան քաղաքի համար՝ համայնքում համակարգային բարեփոխումների և սոցիալական պաշտպանության ոլորտի արդիականացման տեսանկյունից:

Հետազոտության արդյունքում ներկայացված բացահայտումներն ու առաջարկությունները, ինչպես նաև օրինակելի կանոնադրություններն ու չափորոշիչները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ համայնքներում սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման մեխանիզմներ մշակելու և ներդնելու համար:

Վերլուծության հիմնական լսարանն է Երևանի քաղաքապետարանի ղեկավար անձնակազմը, Երևան համայնքի ավագանին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության ու ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինները, ՍԱՏԲ-ները, ինչպես նաև ՀՀ կառավարությունն ու ներգրավված այլ գործընկերները՝ ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ՏԿԵՆ, մարզային և համայնքային իշխանությունները, միջազգային և հասարակական կազմակերպություններըև այլոք:

<u>**Վերլուծության մեթոդաբանությունը**</u>

Վերլուծության ժամանակ կիրառվել են մի շարք գործիքներ, այդ թվում՝

1. **Փաստաթղթային վերլուծություն՝** օրենքների և իրավական այլ ակտերի, ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերի, բյուջեի, կանոնադրությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրություն,
2. **Ֆոկուս խմբային քննարկում՝** սոցիալական ոլորտի պատասխանատու՝ Երևանի ավագանու անդամների, Երևան համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնող մոտ 25 ՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի սոցիալական աշխատանքի և տեխնոլոգիաների ամբիոնի դասախոսների հետ,
3. **Հարցազրույցներ՝** որոշում կայացնողների մակարդակով ԱՍՀ և ՏԿԵ նախարարների տեղակալների, ինչպես նաև քաղաքապետի առաջին տեղակալի, խորհրդականի և աշխատակազմի քարտուղարի, բոլոր վարչական շրջանների ղեկավարների և (կամ) նրանց տեղակալների և (կամ) աշխատակազմի քարտուղարների, ինչպես նաև սոցիալական բաժինների, ՍԱՏԲ-ների պետերի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի 4 վարչությունների և բաժինի պետերի, ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ՏԿԵՆ աշխատակիցների ու այլ ծառայողների (ԽՀՀ-ի քարտուղար) հետ իրականացվել են հարցազրույցներ՝ թվով 66 անձ: :
4. **Առցանց հարցումներ՝** հարցաշարի միջոցով սոցիալական բաժինների և ՍԱՏԲ-ների աշխատակիցների հետ, որոնց մասնակցել են 163 աշխատակից՝ հետևյալ համամասնությամբ. 29.1% վարչական շրջանների սոցիալական բաժինների և 70.9% ՍԱՏԲ-ի աշխատակիցներ: Գործիքի միջոցով գնահատվել է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կառավարման արդյունավետությունը հետևյալ յոթ ասպեկտներով՝ ինքնություն, քաղաքականություն, կազմակերպական կառուցվածք,

գործառույթներ, մարդկային ռեսուրսների կառավարում, աշխատանքային գործընթացներ, նյութատեխնիկական միջոցներ,

5. **Մասնակցային հանդիպումներ ու քննարկումներ՝** ոլորտային ՀԿ-ների հետ և արտագնա քննարկում 34 մասնակիցների՝ վարչական շրջանների ղեկավարի տեղակալների և (կամ) աշխատակազմի քարտուղարների, սոցիալական բաժինների և ՍԱՏԲ-ների ղեկավարների և (կամ) աշխատակիցների հետ,
6. **Նախկինում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն**:

Քանակական արդյունքները համադրվել են այլ գործիքների կիրառմամբ ստացված տվյալների հետ և իրենց ազդեցություն են ունեցել սույն զեկույցի բացահայտումների, եզրակացությունների և առաջարկությունների վրա: Վերլուծության մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է հաշվետվության առաջին մասում:

Զեկույցն ունի 4 հիմնական գլուխ. մեթոդաբանություն, բացահայտումներ և վերլուծություն, եզրակացություններ և առաջարկություններ: Բացահայտումներն, եզրակացություններն ու առաջարկություններն ամփոփվել են 7 ուղղություններով, որոնք ներկայացված են ստորև:

<u>Հիմնական բացահայտումներ ու եզրակացություններ</u>

1. ***Քաղաքականություն, ռազմավարություն, բյուջետավորում***

Երևան քաղաքի 2019-2023թթ. զարգացման ծրագրում, ինչպես նաև վերանայված նախագծում, երեխայի և սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրները, ինչպես նաև ծրագրերը համահունչ չեն ՀՀ կառավարության և ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված երեխայի և սոցիալական պաշտպանության ռազմավարական նպատակներին, ինչպես նաև թերի են իրենց բովանդակությամբ: Սոցիալական ապահովությանն ու երեխաների պաշտպանությանն հատկացված ֆինանսական միջոցները հստակ չեն ձևակերպված և մեծամասամբ ուղղված են նյութական և բնաիրային աջակցության տրամադրմանը, քան թե համայնքում նպատակային և արդյունավետ սոցիալական ծրագրերի իրականացմանը: Բացակայում է ծրագրային բյուջետավորման մոտեցումը, հստակ ընթացակարգեր ֆինանսական միջոցների տրամադրման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների պատվիրակման և տեղական սոցիալական ծրագրերի իրականացման համար:

Սոցիալական պաշտպանության բարեփոխումները ՀՀ-ում օրակարգային այն հարցերից են, որոնց շուտափույթ լուծումն ու սոցիալական ծառայությունների տրամադրման դերակատարների լիազորությունների հստակեցումն ու տարանջատումը խիստ կարևոր է՝ առավել ևս հաշվի առնելով ՍԱՏԲ-ների ենթակայության փոփոխության վերաբերյալ նախագիծը և դրանից բխող ռիսկերը Երևան քաղաքում:

2. ***Իրավական և օրենսդրական դաշտ***

Սոցիալական պաշտպանության համակարգը Երևան քաղաքում բարդ է և կարգավորվում է տարբեր իրավական ակտերով, ինչն երբեմն տարընթերցումների տեղիք է տալիս: Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության իրավական հիմքերն ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է իրավական ակտերն ուսումնասիրել

փուլային տարբերակով՝ նախնառաջ տեղական ինքնակառավարման իրավական հիմքերը, այնուհետև՝ Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ Երևան քաղաքում սոցիալական պաշտպանության իրականացումը՝ հատուկ շեշտադրելով բարելավման կարիք ունեցող խնդիրները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը կիրառելի է Երևան քաղաքի վերաբերյալ այնքանով, որքանով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է առանձնահատկություններ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելու, ինչպես նաև վարչատարածքային բարեփոխումների շարունակական ընթացքն ապահովելու համար պետությունը ստանձնել է պարտականություն՝ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի դրույթների համաձայն իրականացնել լիազորությունների ապակենտրոնացմանն ուղղված միջոցառումներ, որոնց համաձայն՝ այն սոցիալական խնդիրները, որոնք կարելի է լուծել կազմակերպական տեղական մակարդակում պետք է չբարձրանան ավելի բարձր կազմակերպական մակարդակ:

Համայնքի խնդիրները լինում են պարտադիր և կամավոր, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով: Տարընթերցումները և մեկնաբանությունների բացակայությունը բարդացնում է պարտադիր և կամավոր խնդիրների լուծումը: Իսկ համայնքի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը:

Տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքով սահմանված կարգով պարտավոր են առաջնահերթությամբ ապահովել համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների կատարումը:

Համայնքի պարտադիր խնդիրները հանրային նշանակության այն խնդիրներն են, որոնց լուծմամբ ապահովվում է համայնքի բնականոն կյանքի ընթացքը: Համայնքի պարտադիր խնդիրները[1] սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, իսկ դրանց լուծման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները՝ օրենքով: Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքն ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի իմաստով սահմանված համայնքի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը:

Համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:

---

[1] Համայնքի պարտադիր խնդիրներից են, ի թիվս այլոց, նաև համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով: Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ չափորոշիչները խիստ ընդհանրական են, ուղղված է տարբեր թիրախային խմբերի, տրամադրվում է տարբեր մեխանիզմներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն ունի հատուկ 5 լիազորություններ: Երևանի առանձնահատկություններից ելնելով պետք է առաջնահերթ նշել, որ սոցիալական պաշտպանության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական մեկ լիազորությունը. կազմակերպում է քաղաքային սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև հետևյալ պատվիրակված լիազորությունը, աջակցում է պետական սոցիալական ապահովության ծրագրերի իրականացմանը:Սոցիալական պաշտպանության համակարգի վերլուծությունն անհնարին է առանց ԽՀՀ-ների գործունեության ուսումնասիրության: ՀՀ օրենսդրության համակարգային ուսումնասիրությունից բխում է, որ երեխայի մասնակցությամբ ցանկացած դեպքի վարման ընթացքում երեխայի իրավունքներն ու շահերը պետք է լինեն պաշտպանված և իրացված ամբողջ ծավալով՝ ապահովելով երեխաների իրավունքներին նախապատվություն տալը և երեխայի լավագույն շահը: ԽՀՀ-ն հանդիսանում է ԽՀՄ-ին մասնագիտական աջակցություն ցուցաբերող և հասարակական հիմունքներով գործող կոլեգիալ մարմին: ԽՀՀ-ների եզրակացությունները և ԽՀՄ-ների որոշումները, հանդիսանալով մասնագիտական փաստաթղթեր, շատ հաճախ ընդունվում են պետական տարբեր մարմինների և հիմնարկների, ներառյալ՝ դատարանների կողմից՝ որպես անհերքելի փաստեր և չեն վիճարկում, մինչդեռ նրանք կարող են լինել անգամ մասնագիտական տեսանկյունից բազմաթիվ թերություններով: Երեխաների համար դրանք վտանգ են ներկայացնում այնքանով, որ դատարանը որոշում է կայացնում հիմնվելով ոչ թե մասնագիտական կարծիքի, այլ իրավիճակային լուծման, երբեմն նաև կողմնապահության հիման վրա: Այս հարցը բարդանում է նաև ելնելով նրանից, որ ԽՀՀ-ները ձևավորվում են կամավորության սկզբունքով, այլ ոչ թե մասնագիտական որակների հիման վրա:

Հատկանշական է, որ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված սոցիալական աջակցության սկզբունքներից առաջինն է երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը:

3. Կանոնադրություններ, գործառույթներ

Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքները կանոնակարգելու համար Երևան քաղաքի ավագանու 2018թ. նոյեմբերի 13-ի N18-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը: Սակայն իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դեռևս գործում է միաժամանակ ավագանու երկու որոշում, որով սահմանվում է քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև Երևանի քաղաքապետարանի, քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի, վարչական

շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական, առողջապահության և ծրագրերի, ինչպես նաև ՍԱՏԲ-ների կանոնադրությունները:

Այսպիսով, ՍԱՏԲ լիազորությունները մասնակի են կրկնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական բաժնի լիազորությունները, սակայն գործնականում կրկնությունները շատ են՝ ելնելով այն հանգամանքից, որ սոցիալական բաժնի լիազորությունների խաչաձև իրականացումն անհրաժեշտ է սոցիալական պաշտպանությունն ամբողջական և թիրախային իրականացնելու համար: Համեմատելով վարչական շրջանի սոցիալական, առողջապահության և ծրագրերի ու Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինները՝ ակնհայտ է, որ դրանց գործառույթներն ունեն մեծ վերածածկ, սակայն սոցիալական բաժնի գործառույթներում երեխաներն առհասարակ չեն նշվում:

Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական, առողջապահության և ծրագրերի բաժինները և ՍԱՏԲ-ները ոչ միայն ունեն համանման լիազորություններ, որոնք հիմնականում տարբերվում են շահառուների շրջանակով, այլև փաստացի այդ երկու մարմիններն իրար հետ պետք է ունենան սերտ համագործակցություն և գործառութային մասով փոխլրացնեն միմյանց՝ կարողանալով արդյունավետ լուծել վարչական շրջանի սոցիալական խնդիրները:

Ինչ վերաբերվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնին, ապա այն իրականացնում է բազմաթիվ գործառույթներ, որոնց մեծ մասը գործողություններ են: Գործառույթները մեծամասամբ ակնհայտ սոցիալական բնույթի են և համադրելով Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության գործառույթների հետ՝ հանդիսանում են նախապայման սոցիալական պաշտպանություն տրամադրելու համար, ինչով և որոշվում է այս երկու ստորաբաժանումների փոխգործակցության առաջնայնությունը: Բացառություն են կազմում գենդերային հավասարությանն ուղղված, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, ինչպես նաև երեխաների իրավունքների նեղ մասնագիտական պաշտպանության առանձնահատուկ գործառույթները: Սակայն, Երևան քաղաքի զարգացման ծրագրում և բյուջեում, բաժնի միջոցառումները հիմնականում առնչվում են երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտին, իսկ կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ ակնարկներն ընդհանրապես բացակայում են:

Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության գործառույթները լոկ սոցիալական են և այդ գործառույթներն իրականցվում են անձի և ընտանիքի հետ աշխատելով, և քանի որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից, դա ենթադրվում է, որ վարչությունը սոցիալական գործառույթներ իրականացնելիս նույնպես պետք է առաջնորդվի երեխայի լավագույն շահով: Այս հանգամանքը կարևորվում է Երևանի քաղաքապետարանի երկու ստորաբաժանումների՝ սոցիալական ապահովության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի աշխատանքները համահունչ դարձնելու գործընթացում:

Հետազոտության նպատակներից է Երևան քաղաքում համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանն աջակցելը: Սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդնումն ու զարգացումը կարևոր է ոչ միայն Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչությունում, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական բաժիններում, այլ նաև Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնում, որը միանշանակ բխում է երեխայի լավագույն շահերից: Երեխայի հիմնախնդիրների լուծումը և պաշտպանությունն ուղղակիորեն պայմանավորված է ընտանեկան այն պայմաններով, որտեղ գտնվում է երեխան, և առանց ընտանիքի հետ պատշաճ աշխատանք իրականացնելու դրանց արդյունավետ իրականացնելն անհնարին է:

Երևան քաղաքում ԻՄԾ-ների ներդրման շրջանակներում արդեն իսկ գործում են համալիր սոցիալական ծառայությունների տարածքային 7 կենտրոն, որոնք մեկ պատուհանի սկզբունքով ծառայություններ են մատուցում քաղաքացիներին (բացառությամբ Ավան և Նուբարաշեն վարչական շրջանների, որտեղ կենտրոնացված է հիմնականում ՍԱՏԲ գործառույթները): Սակայն կան համակարգման, ծառայությունների մատուցման, ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգի բացակայությամբ պայմանավորված խնդիրներ:

Կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ քանակական և որակական հարցումները հաստատել են այն փաստը, որ այն կանոնակարգված և արդյունավետ չէ և չի համապատասխանում աշխատակիցների կարիքներին՝ թե՛ ՍԱՏԲ-ներում, թե՛ վարչական շրջանների սոցիալական բաժիններում: Իսկ գործառույթների վերաբերյալ նույն հարցումները փաստել են, որ ՍԱՏԲ-ներում գործառույթները հստակ սահմանված չեն և արդյունավետ բաշխված չեն ըստ ներքին կառուցվածքի, որի արդյունքում նվազում է մատուցվող ծառայությունների որակը: Սոցիալական բաժիններում գործառույթների, իրավասությունների և լիազորությունների շրջանակը բավարար ձևով սահմանված չէ, հետևաբար բաժիններին տրված գործառույթները լիարժեք չեն կամ անհամատեղելի են հնարավորությունների և փաստացի կատարվող աշխատանքի հետ, ինչպես նաև գործառույթները հստակեցված չեն սոցիալական աշխատանքի կազմակերպման և իրականացման արդյունավետության, մատչելիության և հասցեականության ապահովման տեսանկյունից: ՍԱՏԲ-ների և վարչական շրջանների սոցիալական բաժինների ու ՀԿ-ների և այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը բավարար մակարդակի չէ՝ համապատասխան մեխանիզմների մասնակի լինելու հետևանքով:

4. Աշխատանքային գործընթացներ

Աշխատանքային գործընթացների վերաբերյալ քանակական և որակական հարցումները փաստում են, որ ՍԱՏԲ-ներում գործընթացները և ընթացակարգերը հստակեցված չեն կամ էլ թերի են ու ոչ արդյունավետ, հատկապես վարչարարության և փաստաթղթաշրջանառության, ինչպես նաև աշխատաժամանակի և տեղեկատվության կառավարման տեսանկյունից: Սոցիալական բաժիններում առկա են վերոնշյալ գրեթե բոլոր դրսևորումները:

5. Նյութատեխնիկական միջոցներ

Նյութատեխնիկական միջոցների կառավարման վերաբերյալ քանակական և որակական հարցումները հաստատում են, որ ՍԱՏԲ-ներում և վարչական շրջանների սոցիալական բաժիններում գոյություն ունեն մի շարք խնդիրներ՝ շենքային և սենյակային պայմանները բավարար չեն, համակարգչային տեխնիկայի հնամաշությունն ու ոչ բավարար քանակը բացասաբար է ազդում աշխատանքի վրա: Շահառուների տվյալների արխիվի բացակայությունը խոչընդոտում է փաստաթղթերի պատշաճ պահպանմանը և օգտագործմանը: Աշխատանքի կազմակերպման համար տրամադրված ֆինանսական միջոցները բավարար չեն, չկա միասնական մոտեցում: Նյութական և տեխնիկական միջոցների սղության պատճառով առաջանում են աշխատանքների արդյունավետ իրականացման համար խոչընդոտներ:

6. Համայնքային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում

Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար գործող օրենսդրությունը հնարավորություն չի տալիս բազային-մասնագիտական գիտելիքներով համայնքային ծառայողի օբյեկտիվ ընտրություն կատարելու համար, իսկ մասնագիտական հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստումներն իրենց հերթին չեն բավարարում համայնքային ծառայողի մասնագիտական վերապատրաստման կարիքը: Համայնքային ծառայողի կատարողականի գնահատման համակարգի բացակայության հետևանքով հնարավոր չէ ապահովել համայնքային ծառայողին խրախուսելու կամ հակառակը՝ կարգապահական տույժի ենթարկելու, վերապատրաստման կարիքը գնահատելու և մի շարք այլ կարևորագույն գործառույթների պատշաճ իրականացումը: Պաշտոնների անձնագրերը մեծ մասամբ չեն համապատասխանում իրականում կատարվող աշխատանքներին:

Մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ քանակական և որակական հարցումների արդյունքները փաստում են, որ իրականացվում է սխալ կադրային քաղաքականություն: Առկա են նաև խնդիրներ աշխատակիցների անվտանգության և ապահովագրության, աշխատանքային մթնոլորտի, աշխատանքի չափի և վարձատրության վերաբերյալ, ինչը հաճախ հանգեցնում է աշխատակիցների դեմոտիվացիային:

7. Սոցիալական աշխատանք, տեղական սոցիալական պլանավորում

Համայնքներում սոցիալական ծառայությունների մատչելիության և հասցեականության ապահովման տեսանկյունից կարևորվում է սոցիալական աշխատողի հաստիքի ներդրումը: Ներկայումս օրենքում առկա ձևակերպումը լիարժեք կերպով չի ապահովում նշյալ նպատակի իրագործումը, քանի որ այն պահանջում է 5000 և ավելի բնակչություն ունեցող համայնքում ստեղծել սոցիալական աշխատողի հաստիք, սակայն հստակ չէ, թե քանի հաստիքի մասին է խոսքը և յուրաքանչյուր 5000 բնակչին քանի սոցիալական աշխատող պետք է սպասարկի աշխատանքի արդյունավետության ապահովման համար: Նման կարգավորումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ սոցիալական աշխատողի առկայությունը կրում է ձևական բնույթ և պայմանավորված է օրենքի պահանջն ապահովելու ձևական անհրաժեշտությամբ՝ այսպիսով Երևանի քաղաքապետարանում առկա է միայն մեկ համայնքային սոցիալական աշխատողի հաստիք: Հարկ է նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև

այդ բառի հոգնակիի վրա: Այսինքն, Երևան քաղաքում համայնքային սոցիալական աշխատողների հաստիքների ավելացման համար իրավական տեսանկյունից որևէ խոչընդոտ չկա:

Երևան քաղաքի վարչական շրջաններում սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության պատճառով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին և անձանց սոցիալական ծառայությունները հիմնականում տրամադրվում են նյութական ռեսուրսների տեսքով, ինչը ենթադրում է, որ աջակցությունից դուրս են մնում մյուս խնդիրները, որոնք կարող են հանգեցնել կյանքի դժվարին իրավիճակին (օրինակ՝ բռնության առկայություն, կրթությունից դուրս մնալ, զբաղվածության բացակայություն և այլն):

Տեղական սոցիալական ծրագրերի բացակայությունը հանգեցնում է համայնքի սոցիալական կարիքներին հրատապ արձագանքման, ինչպես նաև համայնքի բնակիչների առանձին խմբերին (օրինակ՝ տարեցներին, երեխաներին կամ հաշմանդամություն ունեցող անձանց) հուզող կոնկրետ հիմնախնդիրներին լուծումներ առաջարկելու անհնարինությանը: Գործնականում տեղական սոցիալական ծրագրեր չեն կազմվում և իրականացվում, բացառությամբ միջազգային կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի: Հիմնական պատճառը ռեսուրսների բացակայությունն է, կարողությունների ու իրազեկվածության ցածր մակարդակը:

Հիմնական առաջարկություններ

Սույն հետազոտության արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդիականացմանն ու կայացմանը: Նշված առաջարկությունները կիրառելի են նաև այլ համայնքների համար՝ համապատասխան տեղայնացմամբ:

Քաղաքականություն, ռազմավարություն, բյուջետավորում

Երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտների զարգացման պետական առաջնահերթությունների համաձայն՝ անհրաժեշտ է վերանայել և Երևանի 2019-2023թթ. զարգացման ծրագրի երեխայի և սոցիալական ապահովության (պաշտպանության) տեսլականը համապատասխանեցնել ՀՀ կառավարության ծրագրին և աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարությանը (այն հաստատվելուց հետո): Վարչական շրջանների սոցիալական բաժինների ծրագրերը հարկավոր է համապատասխանեցնել Երևան քաղաքի երեխաների և սոցիալական պաշտպանության առաջնահերթություններին՝ այսպիսով ձևավորելով համապարփակ և միասնական մոտեցումներ:

Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների բյուջետավորման գործընթացն ու ծրագրերի ֆինանսավորումը հարկավոր է փոխկապակցել ոլորտի զարգացման առաջնահերթությունների հետ: Առաջարկվում է իրականացնել երեխաների և սոցիալական պաշտպանության ծրագրերի փաստարկված ֆինանսական հաշվարկներ, ինչպես նաև նոր մոտեցումների համար

կատարել ֆինանսական գնահատում: Անհրաժեշտ է նաև հստակեցնել և մշակել աջակցության տրամադրման՝ ներառյալ ծառայությունների պատվիրակման ֆինանսավորման մեխանիզմներ և ընթացակարգեր: Երեխաների պաշտպանության ոլորտի ծախսերն անհրաժեշտ է պատշաճ կերպով արտացոլել բյուջեի հայտի մեջ: Առավել երկարաժամկետ առաջարկություն է հանդիսանում Երևան քաղաքում ծրագրային բյուջետավորման ներդնումը, որպես ռեսուրսների կառավարման ու ծրագրերի արդյունավետությունը գնահատելու լավագույն միջոց:

<u>Իրավական և օրենսդրական դաշտ</u>

Այս խմբի առաջարկությունները ներկայացվել են երկու ենթախմբով՝ ընդհանուր բնույթի օրենսդրական փոփոխություններ և Երևան քաղաքին վերաբերող և հանգում են հետևյալին, որ՝

- ցանկալի է օրենսդրորեն սպառիչ ներկայացնել պարտադիր խնդիրները և դրանց իրականացման լիազորությունները՝ այն հնարավորինս պարզ և հասկանալի ձևակերպելով,

- սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով: Այդ չափորոշիչները հաստատելու համար ցանկալի է, որ լինեն ՀՀ ԱՍՀՆ-ի՝ որպես սոցիալական ոլորտի լիազոր մարմնի կողմից ներկայացված չափորոշիչներ և (կամ) չափանիշներ, որոնք հիմք կհանդիսանան կոնկրետ կամավոր խնդրների լուծման նպատակով հատուկ չափորոշիչներ ձևավորելու համար:

- հաշվի առնելով ԽՀՀ-ի աշխատանքի ծավալներն ու բարդությունը՝ ԽՀՀ-ների գործունեությունը բարելավելու համար անհրաժեշտ է հետևյալ քայլերի համակցված իրականացումը՝

1. ԽՀՀ քարտուղարը պետք է լինի ոչ թե հասարակական հիմունքներով գործող ԽՀՀ անդամ, այլ նրա հաստիքը պետք է նախատեսված լինի ԽՀՄ-ում և լիազորությունները պետք է նախատեսված լինեն համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով: Դրա համար անհրաժեշտ է նաև փոփոխություն իրականացվի 2016թ. հունիսի 2-ի ՀՀ կառավարության N631-Ն որոշման հավելվածի 11-րդ կետում,

2. պետք է նախատեսել ԽՀՀ-ի որոշումների և եզրակացությունների բովանդակությանը ներկայացվող ֆորմալ պայմաններ, որոնք կլինեն պարտադիր տարբեր սոցիալական իրավիճակների և (կամ) սոցիալական խմբերի ներկայացուցիչների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն իրականացնելու շրջանակ:

3. ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում ԽՀՄ-ն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան: Երեխային վերցնելիս ԽՀՄ-ն պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով: Այս լիազորության իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ և հմտություններ երեխային վերցնելու գործընթացն

անցնցում իրականացնելու համար: Այս գործընթացները կարող են սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ՝ օրենքում համապատասխան լիազորող նորմի ամրագրումից հետո:

4. Անհրաժեշտ է ապահովել տարբեր վարչական շրջանների ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների միջև համագործակցությունը՝ նախատեսելով համագործակցության հստակ մեխանիզմներ, ինչը խիստ կարևոր է՝ հաշվի առնելով, որ ԽՀՄ-ներում և ԽՀՀ-ներում քննարկվող տարաբնույթ հարցերը վերաբերելի են տարբեր վարչական շրջաններին, փոխկապակցված են, ինչպես նաև պայմանավորված են միջհամայնքային համատեղ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ:

- առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետության Երևան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշում:

<u>Բացահայտումներ ՍԱՏԲ-ների ենթակայության փոփոխության վերաբերյալ</u>

Միևնույն վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերի սոցիալական բաժինները և ՍԱՏԲ-ներն ունեն համանման լիազորություններ: Փաստացի այդ երկու մարմինները պետք է գործառութային մասով փոխլրացնեն միմյանց՝ արդյունավետորեն լուծելով վարչական շրջանի սոցիալական խնդիրները: ՍԱՏԲ-ների ենթակայության փոփոխման դեպքում՝

- հստակեցված չէ վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի սոցիալական բաժինների հաստիքների վերանայումը և մասնագետներով համալրումը, ինչպես նաև այդ բաժինների, ՍԱՏԲ-ների (դրանց փոխարեն ձևավորվող մարմինների), Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության համագործակցությունը,
- հնարավոր է առաջանա վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերի սոցիալական բաժնում և ՍԱՏԲ-ներում տարաբնույթ պրակտիկայի ձևավորում՝ ղեկավարման առանձնահատկություններից ելնելով, ինչը կարող է հանգեցնել իրավիճակների, որտեղ կխախտվի սոցիալական ծառայությունների տրամադրման համաչափությունն ու ամբողջականությունը,
- պահանջվում է ՍԱՏԲ-ներում փաստաթղթաշրջանառության և արխիվացման գործընթացի կազմակերպում, որպեսզի վարչական շրջանների շահառուներին վերաբերող տեղեկատվությունը չանհետանա և պահպանվի վարչական շրջանում,
- ՍԱՏԲ-ների ծառայողների՝ համայնքային ծառայող լինելու դադարումն ու քաղաքացիական ծառայող համարվելը հանգեցնելու է նրանց նշանակման, լիազորությունների դադարեցման փոփոխման, ինչը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի՝ առնվազն անցումային դրույթներ նախատեսելով,
- անհրաժեշտություն է առաջանալու ՀՀ կառավարության բազմաթիվ որոշումների և այլ իրավական ակտերի փոփոխման, ինչպես նաև թե՛ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական բաժնի, թե՛ ՍԱՏԲ-ի կանոնադրությունների և ծառայողների պաշտոնի անձնագրերի վերանայման:

Կանոնադրություններ, գործառույթներ

Անհրաժեշտ է ավագանու նոր որոշմամբ ուժը կորցրած ճանաչել Երևանի ավագանու 2013թ. հունիսի 15-ի N11-Ն որոշումը, քանի որ ներկայումս գործում է ավագանու երկու որոշում, որով հաստատվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի նույնաբովանդակ կանոնադրությունը, ինչպես նաև կանոնադրության մեջ ներառել սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող սեփական լիազորությունները:

Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրություն մեջ անհրաժեշտ է ներառել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վարչական շրջանի ղեկավարին վերապահված լիազորությունները, որոնք ներկայացված են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի կանոնադրության մեջ:

Գործառույթների վերլուծության հիման վրա, առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի հիմքի վրա ձևավորել նոր ստորաբաժանում՝ երեխայի և սոցիալական պաշտպանության վարչություն՝ առանձնահատուկ և առաջնային դեր նախատեսելով երեխաների իրավունքների պաշտպանությանը: Վարչությունը պետք է կազմված լինի՝ երեխայի պաշտպանության և սոցիալական պաշտպանության բաժիններից: Այս փոփոխության արդյունքում անհրաժեշտ է մշակել և հաստատել վարչության օրինակելի կանոնադրությունը, արտացոլելով և հստակեցնելով բոլոր անհրաժեշտ գործառույթները՝ Երևան քաղաքում ոլորտի համակարգման, տեղական սոցիալական ծրագրերի մշակման, վերահսկողության, մշտադիտարկման և գնահատման, տվյալների վերլուծության, սուպերվիզիային և այլ ուղղություններով:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական բաժնի լիազորությունները վերանայման կարիք ունեն՝ նաև ելնելով այն հանգամանքից, որ նախատեսվում է փոփոխել ՍԱՏԲ-ների ենթակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայիս լիազորությունները չեն բավարարում համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության ողջ տիրույթն ապահովելու և օրենսդրությամբ համայնքին վերապահված լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար: Անհրաժեշտ է ներառել գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծման, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ և այլ գործառույթներ: Այսպիսով, նաև առաջարկվում է փոփոխել սոցիալական բաժինների անվանումը, դարձնելով դրանք՝ երեխայի, սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժիններ:

Համայնքային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում

Համայնքային ծառայության ոլորտում առաջարկված բարեփոխումները վերաբերում են հետևյալ կարևորագույն՝ համայնքային ծառայողների վերապատրաստման, թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նոր կանոնակարգումների, հաշվետվողականության համակարգ նախատեսելու գործընթացներին: Նշված խնդիրներին լուծում տալու համայնքի ցանկացած ոլորտի զարգացմանն ուղղված քայլերը կդառնան

առավել իրատեսական, քանի որ հանրային ծառայության օրենսդրությամբ համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է ՀՀ օրենքներով և ավագանու համապատասխան որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

Հաշվի առնելով փորձառու մասնագետների անհրաժեշտությունը, համայնքում կատարվող աշխատանքների ծավալի փոփոխությունը, ինչպես նաև բարելավմանն ուղղված կազմակերպչական աշխատանքների դյուրինացումը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով հարկավոր է նախատեսել տեղափոխության, փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելը, որը հնարավորություն կտա փոխադրվել և նշանակվել աշխատակազմի համայնքային ծառայության այլ պաշտոնում: Համայնքային ծառայողի տեղափոխության և փոխադրման միջոցով պաշտոն զբաղեցնելու կարգն ու պայմանները սահմանում է ՀՀ ՏԿԵՆ-ը: Սակայն՝ մինչև նշված փոփոխությունը կատարելը կարելի է առաջնորդվել գործող օրենքի 29-րդ և 14. 1-րդ հոդվածներով, որոնց համաձայն համապատասխան ժամկետներում փորձառու և հմուտ մասնագետները կարող են արտամրցութային կարգով նշանակվել նոր ստեղծված պաշտոններում՝ պաշտոնի անձնագրի չափանիշներին համապատասխանելու դեպքում:

Կադրային քաղաքականության հարցում հարկավոր է հաշվի առնել հեռահար նպատակներից բխող պահանջները և դրա հիման վրա ապահովել շարունակական կրթության տրամադրում մասնագիտական կարողությունների զարգացման համար: Սոցիալական ոլորտում գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է մասնագիտական ուղեցույցերի և կարգերի մշակում և ներդրում, ինչպես նաև մասնագիտական ուղղորդման և վերապատրաստումների կազմակերպում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ աշխատանք իրականացնելուն. հարցերի ձևակերպում, վարքագիծ, պահվածք, արձագանք և այլն:

Հարկավոր է նաև վարչական շրջանների սոցիալական բաժինների միջև ընդլայնել հորիզոնական համագործակցության հնարավորությունները: Անհրաժեշտ է հետևել աշխատողների իրավասության շրջանակներին, յուրաքանչյուրին տալ իր գիտելիքներին, պաշտոնի անձնագրին համապատասխան աշխատանք, հետևել աշխատանքների իրականացման գործընթացին:

<u>Սոցիալական աշխատանք, տեղական սոցիալական պլանավորում</u>

Երևան քաղաքում տրամադրվող երեխաների և սոցիալական պաշտպանության քաղաքականության արդյունավետ իրականացման ու սոցիալական ծառայությունների հասցեականությունը, որակը և մատչելիությունն բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերը հզորացնել սոցիալական աշխատանքի մասնագետների և հոգեբանների հաստիքներ նախատեսելով: Առաջարկվում է Երևան քաղաքում, ըստ բնակչության աղքատության թվաքանակի համամասնության, նախատեսել մինչև 5000 բնակչություն ունեցող համայնքերի համար՝ նվազագույնը մեկ սոցիալական աշխատանքի մասնագետի հաստիք, և յուրաքանչյուր հաջորդ 3000 բնակչության համար՝ ևս 1 հաստիք, որը ենթադրում է՝ Երևան քաղաքի համար 80 սոցիալական աշխատանքի մասնագետի հաստիք ներդնել: Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում սոցիալական աշխատանքի մասնագետների հաստիքների ներդրման և

ներուժի ծավալները գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել համայնքների սոցիալական խոցելիության ուսումնասիրություն և որոշել կարիքներին համապատասխան ծառայությունների շրջանակը, ծավալը և պահանջվող մասնագիտական ներուժը:

Անհրաժեշտ է տեղայնացնել տեղական սոցիալական պլանավորման և ծրագրերի մշակման գործընթացը վարչական շրջաններում՝ համայնքի սոցիալական աշխատողի մասնակցությամբ և քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունում: Անհրաժեշտ է տեղական սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով առավել ծավալուն վերապատրաստումներ և հանրային իրազեկում կազմակերպել, ինչպես նաև հստակ ընթացակարգեր դրանց մշակման, իրագործման, ֆինանսավորման, մշտադիտարկման և գնահատման համար: Տեղական սոցիալական ծրագրերը նաև հանդիսանում են ծառայությունների պատվիրակման գործընթացը հեշտացնող և փոխկապակցված միջոց, ուստի կանոնակարգման կարիք ունի այս գործընթացը Երևան քաղաքապետարանի առնչությամբ:

<u>Աշխատանքային գործընթացներ</u>

Գործնական անհրաժեշտությունից ելնելով՝ պետք է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների ղեկավարների և ՍԱՏԲ-ների աշխատակազմերի միջև տեղեկատվական միասնական համակարգի գործարկման ուղղությամբ, որը կարևոր խթան կհանդիսանա տրամադրվող ծառայությունների որակի, հասցեականության և մատչելիության բարելավման համար:

ՍԱՏԲ-ներում անհրաժեշտ է հստակեցնել և պարզեցնել ընթացակարգերը և գործընթացները, ինչպես նաև ներդնել աշխատանքի պլանավորման, կառավարման, կազմակերպման, մշակման ու որոշումների ընդունման, պատասխանների կանոնակարգման, աշխատանքների մշտադիտարկման և գնահատման ու վերահսկողության մեխանիզմներ: Փաստաթղթաշրջանառության թղթային տարբերակները հարկավոր է լիարժեք կերպով փոխարինել էլեկտրոնայինով:

Սոցիալական բաժինների համար անհրաժեշտ է մշակել ընթացակարգեր, որոնք առավել արդյունավետ կդարձնեն իրականացվող աշխատանքները, ինչպես նաև դրանց մասին պատշաճ կերպով իրազեկել աշխատակիցներին: Կարիք կա ներդնել սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև կիրառել արագ արձագանքման մեխանիզմներ՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում:

Անհրաժեշտ է իրականացնել Երևան համայնքում սոցիալական ծառայությունների քարտեզագրում համագործակցության լայն հնարավորությունների իրականացման և շահառուների կարիքներին արդյունավետ և համակարգված արձագանքման համար: Շահառուներին մատուցվող ծառայությունների հասցեականության բարձրացման և որակի բարելավման համար անհրաժեշտ է ընդլայնել համագործակցությունն այլ կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ՝ սոցիալական գործընկերության միջոցով:

<u>Նյութատեխնիկական միջոցներ</u>

Անհրաժեշտ է սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում սոցիալական խմբերի համար կազմակերպվող աշխատանքներն իրականացնել հասցեական ֆինանսավորմամբ:

Հարկավոր է վերանայել սոցիալական աշխատողների վարձատրության քաղաքականությունը՝ ներդնելով խրախուսման ու ծախսերի փոխհատուցման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել աշխատակիցների համար աշխատանքային պայմանների բարելավում՝ կարևորելով հատկապես համակարգիչներով, տրանսպորտային և կապի միջոցների պատշաճ ապահովումը:

ՍՍՏԲ-ներում անհրաժեշտ է կատարել գույքի և տեխնիկայի գույքագրում, դրա արդյունքում անհրաժեշտության դեպքում ժամանակակից տեխնիկայի, համակարգչային նոր ծրագրերի ապահովում ըստ մարդկանց քանակի և նոր գույքի տրամադրում, ինչպես նաև աշխատասենյակների բարելավում: Հարկավոր է նախատեսել արխիվի համար համապատասխան տարածք կամ տեխնիկական միջոցներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:_Հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ է ապահովել շենքերի և ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը:

<u>Ամփոփելով վերոնշյալ առաջարկությունները, ստորև ներկայացվում է Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի գծապատկերը՝</u>